

նոյնպէս ոռւս յայտնի բանաստեղծների թարգմանութեամբ։ Դրքի ներածութիւնը գրել է պ. Դերվիշը, իր համառօտ տեսութեան մէջ նա տալիս է հայոց նոր գրական լեզուի զարդացման ուրուագիծը, Ռ. Պատկանեանի կինսագրութիւնը և նրա բանաստեղծական գրուածքների գնահատութիւնը։ Այդ տեսութեան մէջ ոճի մի անձտութիւն կարող է կարծեցնել, թէ ոչմերոսը, Վիրգիլիոսը, Շատորբիանը և այլն թարգմանուել են Հնդկաստանում և ոչ Վենետիկում (տես եր. 6)...

Գիրքը նուիրուած է Գ. Ի. Քանանեանի յիշատակին, որ Ռափայէլ Պատկանեանի ամենամտերիմ բարեկամն էր։ Ըսթերցովի ուշագրութիւնն ենք դարձնում այս համարում զետեղուած Ռ. Պատկանեանի նամակների վրայ, որոնցից մէկում նա շատ լաւ բնորոշում է իր ուղղութիւնը և, կ'ասենք, նշանակութիւնը մեր գրականութեան մէջ (տես երես 89—90)։

Na.

Բուօրու, «Թուրէնի գրադաւունքը» մասն առաջին, թարգմ. ոռւսերէնից։
Ս. Պետերբուրգ, 1904, գինն է 25 կոպ. (նուէր մանուկներին)։

Դժբախտ հայ մանուկները զուրկ են լաւ հայերէն գրքերից։ Մանաւանդ 5—7 տարեկան երեխաները մեզանում համարեա ոչինչ չունին մատչելի իրանց հասկացողութեան և ձըգտումներին։ Բերած վերնագիրը կըող գիրքը գալիս է մասամբ լացնելու այդ պակասը։ մատչելի նիւթը, լեզուն, բազմաթիւ նկարները, մաքուր հրատարակութիւնը—բոլորը լաւ են, և հայ մանուկը կարող է իսկ որ ուրախանալ այդ նուէրով։ Ամեն մէկը նվ մանուկների հետ գործ ունի, գիտէ թէ օրէցօր նրանց անող ուղեղը որքան հարցեր է առաջարկում մեծերին։ «այդ ի՞նչ է. ինչի՞ համար. որ ի՞նչ լինի և այլն և այլն։ Մեզանում մեծերը սովորաբար կամ անմիտ պատասխաններ են տալիս կամ լոեցընում են հարցաւէր մանուկին ասելով. «զահէս տարար, սհլւ արա»։ Եւ ի՞նչ անեն յաճախ իրանք ևս մանուկներից ոչ պակաս տգէտ ծնողները... Այս, պէտք է մտածել որքան կարելի է շատ տալ մեր մանուկներին այդպիսի նուէրներ...»

Ե.